Նվազագույն ջրամատակարարումն ապահովող
խնդիրների և միջոցառումների մասին

1. Նվազագույն ջրամատակարարման սահմանման վերաբերյալ հասկացությունների քննարկում, մեկ անձին անհրաժեշտ ջրի օրեկան նվազագույն քանակության գնահատում և առաջարկում՝

1.1. ՀՀ առողջապահության նախարարության կողմից ներկայացրած առաջարկությամբ առնվազն 50 լիտր օրեկան մեկ անձի համար՝ հաշվի առնելով ջրի որակի գործող ստանդարտները:

(Համաշխարհային բանկի գնահատումների համաձայն 20 լիտր և ավելի օրեկան մեկ անձի համար)

2. Ջրամատակարարման հեռավարության սահմանում

2.1. ՀՀ ներկայումս գործողության մեջ գտնվող ՇՆ և Կ 02.04.02-84-թ.-ի 8-րդ գլխի 20-րդ կետին համաձայն ոչ ավել 100մ շառավղով հեռավորության սահմանում:

(ՀՀ առողջապահության նախարարության կողմից ներկայացրած առաջարկության համաձայն մասնավոր տնատիրություններում առնվազն մեկ բակային ծորակի առկայություն, իսկ Համաշխարհային բանկի գնահատումների համաձայն՝ 1 կմ շառավղով):

3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պարտավարությունների հստակեցում

3.1. պետությունը պետք է կրի ամբողջական պատասխանատվություն,

3.2. պետությունը և համայնքը պետք է կրեն համատեղ պատասխանատվություն (օրինակ համայնքը պետք է որոշակի տոկոսով (որպես տարբերակ՝ 15%) մասնակցություն ցուցաբերի:

4. Պատասխանատվությունը շահագործման հարցերում կրում է՝

4.1. ջրամատակարար կազմակերպությունը (եթե իրականացվում են կենտրոնացված կարգով ծառայություններ),

4.2. տեղական ինքնակառավարման մարմինը (պարզ համակարգերի մասով),

4.3. առանձին մասնագիտացված աշխատանքների մասով տեղական ինքնակառավարման մարմնի և ջրամատակարար կազմակերպության միջև կնքված պայմանագրի շրջանակներում ջրամատակարար կազմակերպությունը՝ աշխատանքների մասով, տեղական ինքնակառավարման մարմինը՝ մատակարարման մասով: